2018, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (521)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Նոյեմբերի 4-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման ու գահակալության 19-րդ տարեդարձը: Այս առիթով աշխարհասփյուռ հայոց եկեղեցիներում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Միածնաէջ Մայր տաճարում սբ Պատարագ մատուցվեց՝ ձեռամբ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթեւ եպս Հակոբյանի:

Պատարագի սրբազան արարողության ընթացքում տրված իր քարոզում Տաթեւ եպիսկոպոսը մասնավոր անդրադարձ կատարեց Ամենայն Հայոց Հայրապետի օծման եւ գահակալության 19-րդ տարեդարձին: «Մեծապես ուրախ ենք եւ միեւնույն ժամանակ հպարտ, որ ականատեսն ու մասնակիցն ենք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու փառավոր էջերից մեկի կերտման՝ անցյալի արժեւորմամբ, ներկայի ազգաշեն գործերով եւ լուսավոր ապագայի տեսլականով: Հիրավի, Ձերդ Սրբության գահակալության 19 տարվա ընթացքում Հայ Եկեղեցին ապրեց հոգեւոր վերածննդի ու զարթոնքի, բարգավաճման ու բարեփոխումների շրջան՝ շնորհիվ Ձերդ Սրբության ներդրած ջանքերի եւ հետեւողական ու նվիրյալ աշխատանքի: Անցած 19 տարիները Հայ Եկեղեցու համար եղան զորացման, բարեկարգման, եկեղեցաշինության տարիներ՝ առավել ճանաչելի դարձնելով Հայ Եկեղեցին միջազգային եւ համաշխարհային հասարակությունների եւ կրոնական ու աշխարհիկ կառույցների առջեւ: Անցած 19 տարիները եղան ոչ միայն տեսանելի, քարակերտ եկեղեցաշինության տարիներ, որ շատ հաճախ շեշտվում է եւ երբեմն էլ շահարկվում, այլեւ անտեսանելի՝ մարդկային հոգում եւ մտքում հոգեւոր տաճարների շինության տարիներ, անձնվեր ծառայության ու նվիրումի տարիներ՝ որպես օրինակ եւ ներշնչումի աղբյուր հանդիսանալով Հայ Եկեղեցու հոգեւոր դասի եւ մեր հավատավոր զավակների համար՝ խոսքով, վարմունքով, սիրով, հավատքով, ինչպես ասում է Պողոս առաքյալը»,– ասաց սրբազան հայրը:

Պատարագիչ սրբազանը ներկայացրեց Հայոց Հայրապետի 19 տարվա հովվապետության ընթացքում տարբեր բնագավառներում իրականացրած հսկայածավալ աշխատանքները՝ մասնավորապես խոսելով հոգեւորականների պատրաստության առաքելությանը լծված հոգեւոր կրթական հաստատությունների, հայեցի դաստիարակության եւ մանուկներին ու պատանիներին կրթություն ջամբող հանրակրթական դպրոցների եւ հայորդյաց տների, հայագիտական, կրթական ու ուսումնական հաստատությունների գործունեության մասին:

Սրբազանը մասնավոր անդրադարձ կատարեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից այս տարիներին իրականացված քարոզչական ու սոցիալական բազմազան ծրագրերին, կարիքավորների, որբերի, հիվանդների, զինծառայողների, ազատամարտիկների խնամքին ուղղված ձեռնարկներին, Հայոց բանակում, հիվանդանոցներում, ազատազրկման վայրերում եւ խնամատար այլ հաստատություններում կազմակերպված հոգեւոր ծառայություններին:

Ընդգծվեց նաեւ կարեւորությունը այս տարիներին գումարված եպիսկոպոսաց եւ եկեղեցական ներկայացուցչական ժողովների՝ միտված Հայ եկեղեցու առաքելության առավել արդյունավորմանը եւ եկեղեցական կյանքի կանոնակարգմանը:

Տաթեւ եպիսկոպոսը նաեւ խոսեց Եկեղեցու, հայրենիքի եւ ժողովրդի առջեւ ծառացած բազմաթիվ մարտահրավերների եւ հարձակումների մասին, որոնցով փորձ է արվում տարատեսակ կեղծիքի տարածմամբ պառակտում առաջացնել հայ ժողովրդի մեջ, խարխլել եւ սասանել Հայ Եկեղեցու հիմքերը: «Այսօր էլ, ինչպես 1700 տարվա ընթացքում, փորձ է արվում պայքարելու քրիստոսահաստատ, դարերի բովով եւ բազում փորձությունների միջով անցած, թրծված, հայ ժողովրդին հայրաբար իր թեւերի տակ առած եւ սնած, բազմիցս վիրավորված, բայց կրկին վերածնված եւ զարթոնք ապրած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ իր ազգընտիր գահակալի դեմ: Այո՛, իրապես զարթոնք, զարթոնք, որ նույնիսկ անզեն աչքով նկատելի ու անվիճելի է, եւ դա հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում, երբ Հայոց Եկեղեցու գահին բազմած է 132-րդ Հովվապետը: Բոլոր ժամանակների Հայոց Եկեղեցու անդաստանում եւ հայ ժողովրդի կյանքում եղել են խնդիրներ, մարտահրավերներ, որոնք ժամանակի հայրապետերի, եպիսկոպոսների, քահանաների եւ Եկեղեցու, ազգի խնդիրներով մտահոգ անհատների իմաստության ու մտածված գործողությունների շնորհիվ իրենց փառահեղ լուծումներն են գտել, եւ իբրեւ ազգ ու Եկեղեցի՝ մենք շարունակել ենք պատվով ապրել եւ բարգավաճել: Այդպես է նաեւ այսօր:

...Վեհափառ Տեր, իբրեւ Հայոց Հայրապետ՝ դուք ձեր իմաստությամբ, աշխատասիրությամբ ու խոնարհությամբ բոլորիս ցույց եք տալիս, թե ինչպես հաղթահարել այդ մարտահրավերները՝ Հայ Եկեղեցին առաջնորդելով առավել զորացման: Իբրեւ քաջ հովիվ եւ առաջնորդ ունենալով Ձերդ Սրբությանը՝ Հայոց Եկեղեցին եւ հայ հոգեւորականությունն այսօր շարունակում են իրենց առաքելությունը, որ եղել է եւ կա Տիրոջ փրկչարար խոսքի քարոզչությունն ու լույսի տարածումը, ազգային եւ քրիստոնեական արժեքների պահպանումն ու տարածումը»,– ասաց պատարագիչ սրբազանը՝ փաստելով, որ հակառակ բազում խոչընդոտների ու դժվարությունների, Աստծո կամքով, Եկեղեցին զորանում ու շենանում է նոր եւ կրթյալ սպասավորներով, նորոգվող եւ կառուցվող սրբավայրերով, նոր սերնդի մեջ ազգային արժեքների սերմանմամբ, հավատքի աճով ու նվիրումով:

Քարոզի ավարտին Տաթեւ սրբազանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանության, աշխարհասփյուռ հայ ժողովրդի եւ բոլոր ներկաների անունից շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ օծման եւ գահակալության 19-րդ տարեդարձի առիթով՝ մաղթելով, որ Աստված անսասան պահի Սուրբ Էջմիածինը, Նորին Սրբությանը շնորհի քաջառողջ երկար տարիներ՝ պարգեւելով անսպառ եռանդ՝ առաջնորդելու իր հավատավոր զավակներին: Սրբազանը հայցեց Բարձրյալի օժանդակությունը Հայոց Հովվապետին՝ ազգաշեն ու եկեղեցաշեն բոլոր ծրագրերի իրագործման համար՝ ի բարօրություն հայ ժողովրդի եւ ի պայծառություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Հավարտ սբ Պատարագի՝ կատարվեց Հայրապետական մաղթանք: Մայր Աթոռի միաբանությունը եւ հավատավոր ժողովուրդը միասնական աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Նորին Սրբության կենաց արեւշատության, արդյունավոր եւ անսասան բազմամյա գահակալության, ինչպես նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտոնավարող եպիսկոպոսներ եւ միաբաններ, թեմական առաջնորդներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, պետական այրեր, Մայր Աթոռի բարերարներ եւ տարբեր թեմերից հոգեւոր հովիվների առաջնորդությամբ ժամանած ուխտավորներ:

Տոնական այս օրը Հայոց Հովվապետին այցելեցին նաեւ մշակույթի տարբեր գործիչներ: Տարեդարձի առիթով Մայր Աթոռում ստացվեցին բազում շնորհավորագրեր աշխարհասփյուռ թեմերից, ազգային կառույցներից եւ հասարակական գործիչներից:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

31 հոկտեմբերի

Ճապոնիայի նորանշանակ դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջուն Յամադային:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր բարեմաղթանքները բերեց դեսպանին եւ հաջողություններ մաղթեց նրան իր առաքելության մեջ՝ կարեւորելով երկու պետությունների միջեւ հաստատված սերտ համագործակցությունը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց Մայր Աթոռի եւ Ճապոնիայի դեսպանության միջեւ ձեւավորված սերտ հարաբերությունները՝ գնահատանքով անդրադառնալով Մայր Աթոռի եկեղեցական կառույցների կողմից իրականացվող բարեսիրական եւ մարդասիրական տարբեր ծրագրերին դեսպանատան մասնակցությանը:

Իր հերթին նորանշանակ դեսպանը հավաստիացրեց Վեհափառ Հայրապետին, որ կանի առավելագույնը՝ երկու ժողովուրդների կապերն առավել սերտացնելու եւ ամրապնդելու գործում: Դեսպան Յամադան նաեւ Նորին Սրբությանը հաղորդեց Հայաստանի պատմամշակութային վայրեր կատարած իր այցելությունների տպավորությունները: Զրույցի ընթացքում խոսվեց Ճապոնիայում ձեւավորված փոքրաթիվ հայ համայնքի, ինչպես նաեւ Արեւելքում պատմական հայկական ներկայության մասին: Անդրադարձ կատարվեց նաեւ ներհայաստանյան քաղաքական զարգացումներին եւ երկրի առջեւ ծառացած զանազան մարտահրավերներին:

3 նոյեմբերի

Հայ հեղափոխական դաշնակցության պատվիրակությանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության պատվիրակությանը՝ գլխավորությամբ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց հայրենի պետության առջեւ ծառացած մարտահրավերներին, ազգային-եկեղեցական կյանքը հուզող խնդիրներին, ազգային ինքնության եւ արժեհամակարգի պահպանությանն ուղղված քայլերին: Խոսվեց նաեւ ժողովրդի կյանքում Եկեղեցու առաքելության առավել աշխուժացմանն ուղղված ծրագրերի եւ ձեռնարկների մասին:

Մասնավորապես անդրադառնալով վերջին շրջանում Հայոց Եկեղեցու դեմ տեղ գտած հարձակումներին՝ տիար Հրանտ Մարգարյանն այս կապակցությամբ վերահաստատեց կուսակցության դիրքորոշումը՝ ամբողջական զորակցություն հայտնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ Ամենայն Հայոց Հայրապետին: Վերջինս ընդգծեց, որ կուսակցությունը, գիտակից Հայ Եկեղեցու ազգապահպան եւ հոգեւոր առաքելության կարեւորությանը, շարունակելու է զորավիգ եւ նեցուկ լինել նրան:

Իր հայրական օրհնությունը բերելով հայորդիներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ կուսակցության կեցվածքին՝ գնահատելով դրսեւորած ոգին եւ գիտակցությունը: Վեհափառ Հայրապետն արձանագրեց, որ ժողովրդի զորակցությունը եւ նախանձախնդրությունը Մայր Եկեղեցու եւ իրենց սրբազան հավատքի հանդեպ արտահայտությունն են այն իրողության, որ Հայոց Եկեղեցին մեր ազգի ինքնության եւ գոյության հիմնական երաշխավորներից է: Նորին Սրբությունը հաստատեց, որ հակառակ բոլոր դժվարությունների՝ Եկեղեցին եւ հոգեւոր դասն անշեղորեն շարունակելու են իրենց փրկչական եւ ազգապահպան առաքելությունը՝ ի նպաստ հայոց կյանքի պայծառության եւ բարօրության:

Նորին Սրբությունը խոսեց նաեւ ժողովրդի եւ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների մասին՝ նշելով, որ ազգի հոգեւոր զորությամբ եւ միասնականությամբ են դարերի ընթացքում հաղթահարվել բոլոր դժվարությունները, եւ արձանագրվել՝ հաղթանակները: Հայոց Հայրապետի խոսքով՝ այսօր եւս, դժվարությունների եւ փորձությունների դիմակայման ճանապարհին, մեր ազգը պետք է հետեւողը դառնա նախնյաց որդեգրած այս կեցվածքի եւ փորձառության:

4 նոյեմբերի

Արմավիրի մարզպետին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արմավիրի նորանշանակ մարզպետ Համբարձում Մաթեւոսյանին՝ ուղեկցությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն եպս Ադամյանի:

Նորին Սրբությունը նորանշանակ մարզպետին իր բարեմաղթանքները փոխանցեց՝ վստահություն հայտնելով, որ Մայր Աթոռի եւ մարզպետարանի միջեւ ձեւավորված սերտ գործակցությունը կշարունակվի արդյունավորվել նոր կենսագործումներով:

Վեհափառ Հայրապետը մարզպետին ներկայացրեց մարզի տարածքում սոցիալական, կրթական եւ այլ ոլորտներում Մայր Աթոռի եւ Արմավիրի թեմի գործունեությունը:

Իր հերթին պրն Համբարձում Մաթեւոսյանը Նորին Սրբությանը ներկայացրեց մարզում իրականացվելիք առաջնահերթ ծրագրերը, ինչպես նաեւ կարեւորեց տարբեր բնագավառներում Հայոց Եկեղեցու հետ համագործակցությունը:

Վերջում, իր գնահատանքը բերելով մարզպետին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը նրան մաղթեց Աստծու օրհնության ներքո պատվով իրականացնել իր ծառայությունը:

Ուրուգվահայ ուխտավորներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ուրուգվահայ ուխտավորներին:

Հանդիպման սկզբում ուխտավորների անունից շնորհակալության խոսք ասաց «Արաքս» ռադիոկայանի տնօրեն Դիեգո Կարա-Մանուկյանը՝ նշելով, որ հայորդիներից շատերն առաջին անգամ են այցելում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Տիար Կարա-Մանուկյանն ընդգծեց, որ յուրաքանչյուր ուրուգվահայի փափագն է այցելել Մայր Աթոռ եւ ստանալ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը: Իր օրհնությունը բաշխելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Ուրուգվայ կատարած հովվապետական այցելություններին, որոնց ժամանակ ականատեսն է դարձել հայ համայնքի հոգեւոր առաջընթացին ու հայապահպանությանն ուղղված նախանձախնդիր եւ ջերմեռանդ գործունեությանը:

Շարունակությունը՝ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Յուրի Վարդանյանի ընտանիքին

Նոյեմբերի 2-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել աշխարհահռչակ ծանրամարտիկ Յուրի Վարդանյանի ընտանիքին:

«Բարեհիշատակ Յուրի Վարդանյանն իր բազմաթիվ հաջողություններով նոր նվաճումներ արձանագրեց մարզական ասպարեզում՝ դառնալով ծանրամարտի բազմակի չեմպիոն, օլիմպիական չեմպիոն: Հաղթանակներ արձանագրելով աշխարհի առաջնություններում՝ նա նշանակալի ձեռքբերումներով հավելեց փառքն ու հեղինակությունը մեր ժողովրդի: Լուսահոգի Յուրի Վարդանյանը նաեւ քաղաքական ասպարեզում իր գործունեությամբ ջանաց օգտակարություն բերել Հայաստանի առաջընթացին եւ հայրենի մեր երկրում սպորտի զարգացմանը: Իբրեւ ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան՝ իր ավանդն ունեցավ հայ-վրացական կապերի ամրապնդման գործում:

Ցավ է ամենքիս համար արժանավոր հայորդու կորուստը: Հոգելույս Յուրի Վարդանյանը, լուսավոր հիշատակ թողնելով մեր ժողովրդի զավակների եւ բոլոր մարզասերների սրտերում, երկրային իր կյանքի ընթացքն ավարտելով, փոխադրվում է հավիտենություն՝ ժառանգելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից Իր հետ եւ որդներին խոստացված Երկնքի արքայությունը»,– ասված է Վեհափառ Հայրապետի ցավակցագրում:

Նորին Սրբությունը հայցել է երկնավոր Տիրոջը Սուրբ Հոգու մխիթարություն ու սփոփանք շնորհել ննջեցյալի ընտանիքին, հարազատներին ու մերձավորներին:

Նորին Սրբությունն աղոթեց զոհված զինվորականների հոգիների հանգստության համար

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոր ցավն է արտահայտել Որոտան-Խնձորեսկ ճանապարհին զինվորական մարդատարի ողբերգական վթարի կապակցությամբ:

Նորին Սրբությունն աղոթեց զոհված չորս քաջարի զինվորականների հոգիների հանգստության համար, խորապես ցավակցեց նրանց ընտանիքներին եւ հարազատներին:

Վեհափառ Հայրապետը շուտափույթ ապաքինման իր մաղթանքներն ուղղեց վիրավոր զինվորներին:

Հայոց Հայրապետի օրհնությամբ ՀՀ Զինված ուժերի հոգեւոր առաջնորդը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական բաժնի տնօրենը եւ թեմական առաջնորդները ամենայն աջակցություն են բերել եւ մխիթարություն են բաշխել զոհված զինվորների հարազատներին: Նրանք այցելել եւ գոտեպնդել են վիրավորված զինվորներին:

Նոյեմբերի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ մատուցվեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հանգիստ հոգվոց զոհված հայրենյաց պաշտպան զինվորների:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը

Վոկտեմբերի 30-ից նոյեմբերի 2-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցան Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված կազմով հերթական ժողովի նիստերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքից հետո որպես ատենապետեր ժողովը վարելու հրավիրվեցին ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը եւ Արեւմտյան Եվրոպայում հայրապետական պատվիրակ եւ Վատիկանում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Խաժակ արք. Պարսամյանը:

Մինչ օրակարգում ընդգրկված հարցերի քննությունը խորհուրդը հաստատեց նախորդ՝ 2018 թ. մայիսի 29-ից հունիսի 1-ը գումարված ԳՀԽ ժողովի արձանագրությունը:

Ժողովի առաջին օրը Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց առաջիկայում ազգային-եկեղեցական ժողով գումարելու հարցը՝ համաձայն Գերագույն հոգեւոր խորհրդի նախորդ ժողովների քննարկումների արդյունքում կայացված որոշումների: Այս կապակցությամբ զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Քննարկումների արդյունքում որոշվեց առաջիկա տարում գումարել ազգային-եկեղեցական ժողով՝ «Հայոց Եկեղեցին 21-րդ դարում. ներկա եւ ապագա» խորագրով: Քննության առնվեցին ժողովի օրակարգում ընդգրկվելիք հարցերը:

Ժողովի երկրորդ նիստում Եկեղեցի-պետություն հարաբերությունների մասին զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը: Ընդգծվեց անհրաժեշտությունը Եկեղեցի-պետություն հարաբերություններն ընդլայնելու կրթական, մշակութային, սոցիալական, առողջապահական եւ տնտեսական ոլորտներում՝ հուսալի երաշխիքներ ապահովելով մեր ազգային-հոգեւոր անվտանգության եւ հայ ինքնության պահպանության համար:

ԳՀԽ անդամները գոհունակությամբ ընդունեցին զեկույցը՝ թելադրելով Մայր Աթոռի պատկան կառույցներին շարունակել զորացնել գործակցությունը պետության հետ՝ ի խնդիր հայրենիքի պայծառության եւ մեր ժողովրդի շեն ու բարօր կյանքի:

Կոմիտաս վարդապետի եւ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի հոբելյանների առնչությամբ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի թանգարանների տնօրեն Ասողիկ քհն. Կարապետյանը՝ տեղեկացնելով, որ հոբելյանների կազմակերպման համար ստեղծվել են պետական հանձնաժողովներ՝ Մայր Աթոռի ներկայացուցչի մասնակցությամբ: Գերագույն հոգեւոր խորհուրդը կարեւոր նկատեց, որ հիշյալ հոբելյանները պատշաճ նշվեն նաեւ Մայր Աթոռում եւ Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում:

Ժողովի երրորդ օրը Հայոց Եկեղեցու գործառնությունների բարելավման ծրագրի ընթացքի վերաբերյալ զեկույց ներկայացրեց «Դավիդյան» հիմնադրամի նախագահ եւ բարեգործ Ասո Դավիդյանը:

Շարունակությունը՝ էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ուրուգվահայ ուխտավորներին

Սկիզբը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ փաստեց, որ այս գործին նպաստում են նաեւ համայնքում գործող հայկական դպրոցը, ռադիոն եւ ազգային կառույցները: Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ ուրուգվահայ համայնքում առկա խնդիրներին ու մարտահրավերներին: Վերջում Վեհափառ Հայրապետը ներկաներին մաղթեց, որ ուխտագնացությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին լավագույնս արդյունավորվի ուրուգվահայության կյանքում՝ նպաստելով համայնքի հայաշունչ ոգու զորացմանը:

6 Նոյեմբերի

ՀՀ-ում Շվեդիայի Թագավորության նորանշանակ դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Շվեդիայի Թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ուլրիկ Թիդեստրոմին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշանակման առիթով շնորհավորեց պարոն Ուլրիկ Թիդեստրոմին՝ բերելով իր բարեմաղթանքները: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ երկու երկրների միջեւ փոխհարաբերությունները նոր ընթացք եւ զարգացում են ստանում: Այդ առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ Շվեդիայի հայ համայնքն ամուր կամուրջ կհանդիսանա երկու ժողովուրդների կապերի առավել խորացման եւ ամրապնդման գործում: Գարեգին Բ Կաթողիկոսն իր գնահատանքն արտահայտեց Շվեդիայի իշխանություններին հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար, ի մասնավորի՝ Մերձավոր Արեւելքից այդ երկիր ապաստան գտած հայորդիների հանդեպ:

Շվեդիայի դեսպանը նույնպես հաստատեց, որ իր կառավարությունն օգնություն է ցուցաբերում երկրում ապաստանած տարբեր համայնքների ներկայացուցիչներին, այդ թվում՝ հայերին: Դեսպան Ուլրիկ Թիդեստրոմը նաեւ հետաքրքրվեց տարբեր ոլորտներում Հայ Եկեղեցու գործունեությամբ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավոր առաքելություն մաղթեց դեսպանին՝ ի զորացումն հայ-շվեդական կապերի:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմին եւ ուսանողներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանի պետական համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմին եւ ուսանողներին՝ գլխավորությամբ ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին՝ բարձր գնահատելով ֆակուլտետի գործունեությունը արեւելագիտության զարգացման գործում: Նորին Սրբությունը մեծապես կարեւորեց արեւելագետ մասնագետների պատարաստումը՝ ուսանողներին հորդորելով ուսման մեջ լինել ջերմեռանդ, իսկ հայրենիքին ծառայելու հարցում՝ նախանձախնդիր:

Իր որդիական խոնարհումը եւ երախտագիտությունը հայտնելով Նորին Սրբությանը՝ պրոֆեսոր Մելքոնյանն անդրադարձավ արեւելագիտության զարգացման գործում հոգեւորականության նշանակալի դերին, ինչպես նաեւ ֆակուլտետի հետ սերտ համագործակցությանը. այսօր էլ հոգեւորականները դասախոսություններով իրենց նպաստն են բերում 50-ամյա ֆակուլտետի արդյունավորմանը:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու պատմությանը եւ ներկա մարտահրավերներին ու դրանց հաղթահարմանն ուղղված ջանքերին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

10 Նոյեմբերի

«Եղիցի լույս» մրցանակին արժանացած Արմեն Մեդվեդեւին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Եղիցի լույս» մրցանակին արժանացած կինոգետ, արվեստաբան, ՀԽՍՀ արտիստ Արմեն Մեդվեդեւին՝ գլխավորությամբ ՀՀ ժողովրդական արտիստ, «Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնի հիմնադիր Հարություն Խաչատրյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով հյուրերին, իր գնահատանքը բերեց պարոն Խաչատրյանին՝ հանդիպման նախաձեռնության առիթով: Նորին Սրբությունը կարեւորեց արվեստի գործիչների նախանձախնդիր աշխատանքը, որով նպաստում են ներկա եւ գալիք սերունդների կրթությանն ու դաստիարակությանը՝ քարոզելով սեր եւ համամարդկային արժեքներ:

Իր հերթին Արմեն Մեդվեդեւն ուրախությամբ նշեց, որ Վեհափառ Հայրապետի հետ հանդիպումը հնարավորություն է՝ բարձր պարգեւի արժանացնելու համար երախտիքի ու խոնարհման խոսքեր հնչեցնելու, ինչի հնարավորությունը չի ունեցել «Եղիցի լույս» մրցանակն ստանալիս:

Հանդիպմանը պարոն Մեդվեդեւը խոսեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ստացած անմոռանալի տպավորությունների մասին՝ նշելով, որ իր համար Մայր Աթոռը հայ ազգի միասնության խորհրդանիշն է:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը, մուլտիպլիկատոր, նկարիչ, ռեժիսոր Գարի Բարդին, կինոռեժիսոր, սցենարիստ Միհեր Մկրտչյանը:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը

Սկիզբը՝ էջ 3

Վերջինս լուսաբանություններ տվեց ԳՀԽ անդամներին դեռեւս 2016 թվականին սկզբնավորված ծրագրի իրականացման հերթական փուլի առնչությամբ:

Ժողովականներն իրենց գնահատանքը հայտնեցին տիար Ասո Դավիդյանին՝ Եկեղեցուն մատուցվող օգտաշատ ծառայության եւ կարեւոր հանձնառության համար:

ԳՀԽ անդամները քննության առան Եվրոպայում եկեղեցական կառույցների վերակազմակերպման հարցը: Խնդրի մասին տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը՝ ներկայացնելով Եվրոպայի երկրների հայկական համայնքների համայնապատկերը՝ հայկական բնակչության վիճակագրությամբ եւ եկեղեցական-վարչական կառուցվածքում դրանց կարգավիճակով:

Գերագույն հոգեւոր խորհուրդը ողջունեց Եվրոպայում եկեղեցական կյանքի վերակազմակերպման նախաձեռնությունը՝ ի խնդիր Եվրոպայում ինչպես ավանդական համայնքների, այնպես եւ նորակազմ համայնքների հոգեւոր-եկեղեցական կյանքի պայծառության:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովն անդրադարձ կատարեց նաեւ վերջին օրերին հանրությանը հուզող՝ **Հայաստանում համասեռամոլների ֆորումի կազմակերպման նախաձեռնությանը** եւ մտահոգություն արտահայտեց հնարավոր ոչ ցանկալի զարգացումների վերաբերյալ՝ ընդգծելով, որ **համասեռամոլության վարքագծի գովազդումը սպառնում է ազգային եւ հոգեւոր արժեքներին**:

Քննարկումների ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը խնդրի վերաբերյալ ներկայացրեց իր դիտարկումները՝ մասնավորապես նշելով. *«Վերջին օրերին խոր մտահոգությամբ տեղեկացանք համասեռամոլների կողմից Հայաստանում նախաձեռնվող ֆորումի լուրերի մասին, որն առաջացրել է մեր ժողովրդի մեծ վրդովմունքը:*

Մեր քրիստոսասեր ժողովուրդը դարեր ի վեր կրողն է աստվածօրհնյալ ընտանիքի նվիրական գաղափարի եւ պահպանողը ընտանիքի սրբագործված արժեքի: Աստվածահաստատ ընտանիքի սրբազան խորհրդով է շարունակվում կյանքի գոյությունը, կյանքի հրաշագործությունը: Աստված պատվիրաններ ու բարոյականության նորմեր է սահմանել արարչաստեղծ մարդու համար: Այսօր, սակայն, փորձ է արվում բարոյական շեղումները եւ դրանց բացահայտ քարոզչությունը ներկայացնել իբրեւ մարդու իրավունքներ եւ ազատություններ: Քրիստոսի Սուրբ Եկեղեցին համասեռամոլության երեւույթի նկատմամբ իր դիրքորոշումն արտահայտել է՝ անընդունելի հռչակելով այդ կենցաղակերպը՝ իբրեւ մարդկային բնության խեղում, բայց երբեք չդադարելով հովվական խնամք ցուցաբերել եւ կոչ անել այդ մեղքի մեջ հայտնված անձանց՝ սրբագրելու իրենց ընթացքը:

Խստորեն մերժելի են եւ դատապարտելի ԼԳԲՏ ներկայացուցիչների կողմից հասարակության մեջ հրահրումներ առաջացնելու քայլերը եւ համասեռամոլության երեւույթի որեւէ հանրայնացում ու դրա գովազդում, որը գայթակղություն է մեր աճող սերնդի համար եւ սպառնալիք՝ մեր ազգի հարատեւությանը»:

Ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը հայտնեց ԳՀԽ անդամներին եւ նիստերին մասնակից հրավիրյալ եկեղեցականներին՝ կարեւորելով քառօրյա քննարկումների արդյունքում առնված որոշումները, որոնք պիտի ծառայեն Մայր Աթոռի հոգեւոր առաքելության առավել արդյունավետ իրագործմանը:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր

ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ — 110

«Մենք՝ ճարտարապետներս, բախտավոր ենք, որ ունենք մի հրաշք երկիր, որի ամեն մի անկյունը մի ուրույն աշխարհ է՝ անկրկնելի, անզուգական: Մենք բախտավոր ենք, որ ունեցել ենք հանճարեղ հայրեր, որոնք, որպես մեծագույն շինարարներ, ժառանգել են մեզ իրենց սրտերը՝ դրած քարի մեջ, դրած ժողովրդի նիստ ու կացի մեջ:

Ու էլի, մենք՝ ճարտարապետներս, բախտ ունենք, եւ այն էլ մեծ բախտ, շենացնելու Հայաստանը, նրա չնաշխարհիկ բնությունը, հայ ժողովրդին տալու այն բոլոր բարիքները, ինչին ընդունակ է արվեստների արվեստ ճարտարապետությունը:

Մենք մեծ կրքոտությամբ եւ ազնվությամբ պետք է աշխատենք հանուն այդ նպատակի: Մեր ստեղծածը պետք է էլ ավելի բարձրացնի հայ արվեստը, հայ մշակույթը եւ հասնի այնպիսի աստիճանի, որ շատ հեռուներից երեւա: Եվ դրան մենք կարող ենք հասնել միայն այն դեպքում, երբ կասենք մեր խոսքը, սեփական խոսքը, հայերեն խոսքը: Դա կլինի, անշուշտ, ժամանակի ոգով ասված, ժամանակի հարստությամբ հագեցած, բայց անպայման հայերեն ասված. այլ կերպ մենք նորը ասել չենք կարողանա եւ կլինենք միայն ընդօրինակողներ՝ անդեմ, անսկզբունք, անհայրենիք»:

Ռաֆայել Իսրայելյան

Աշխարհի հզոր ու ինքնատիպ ճարտարապետություններից մեկի՝ հայկական ճարտարապետության փառավոր հաղթարշավը Տրդատի, Մանուելի, Մոմիկի, Թամանյանի ստեղծարար սխրանքներով չավարտվեց, նոր ժամանակներում՝ 20-րդ դարում, ասպարեզ եկավ նրանց գործը շարունակող մի այլ նվիրյալ՝ Ռաֆայել Իսրայելյանը՝ հայ մշակույթի անմահանուն դեմքերից մեկը:

Ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 17-ին արեւելահայոց հոգեմշակութային կենտրոնատեղի Թիֆլիսում՝ հայոց լեզվի եւ գրականության մասնագետ, բանահավաք Սարգիս Իսրայելյանի (Արցախի տարբեր շրջաններում եւ Թիֆլիսում ծավալել է եռանդուն գիտակրթական գործունեություն) եւ ուսուցչուհի Մարիամ Հախնազարյանի ընտանիքում: 1925 թ. ավարտել է Թիֆլիսի թիվ 72 աշխատանքային հայկական դպրոցը: 1926–1928 թթ. սովորել է Վրաստանի գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետության ֆակուլտետում: 1929–1932 թթ. ուսանել է Լենինգրադի Կոմունալ շինարարության ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետում. ավարտել է որպես ճարտարապետ-նախագծող: 1932–1934 թթ. սովորել է Լենինգրադի Ի. Ե. Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտում, 1934-ին ավարտել է ինստիտուտին առընթեր դիպլոմային նախագծերի նախապատրաստական դասընթացները. «գերազանցությամբ» պաշտպանել է դիպլոմային նախագիծը՝ ստանալով ճարտարապետ-արվեստագետի կոչում: 1936 թ. ավարտել է Ի. Ե. Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտի վարպետության կատարելագործման դասընթացները՝ ստանալով ճարտարապետ-նկարչի կոչում: 1936 թ. տեղափոխվել է Երեւան: Այդ թվականից մինչ կյանքի վերջն աշխատել է Երեւանի Հայարդնախագիծ ինստիտուտում: 1941–1943 թթ. աշխատել է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում՝ որպես ավագ գիտաշխատող:

«Արարատ» գինու գործարան

1941–1963 թթ. դասավանդել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես ավագ դասախոս, 1947-ից՝ դոցենտ: 1944–1958 թթ. եղել է «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ: 1950 թ. ընտրվել է Երեւանի քաղաքային խորհրդի պատգամավոր:



Երեւանում, Թբիլիսիում եւ Լենինգրադում բացվել են Իսրայելյանի ճարտարապետական եւ գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսները, տեղի են ունեցել նրան նվիրված երեկոներ: Այս տարվա սեպտեմբերի 25-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում բացվեց Ռաֆայել Իսրայելյանի 110-ամյակին նվիրված ցուցահանդեսը՝ «Իսրայելյան՝ ծանոթ եւ անծանոթ» խորագրով:

Վաստակաշատ արվեստագետն ստացել է բազմաթիվ մեդալներ, մրցանակներ, պատվոգրեր, արժանացել Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի, Հայկական ԽՍՀ վաստակավոր ճարտարապետի, ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետի պատվավոր կոչումներին:

Իսրայելյանի նախագծերով ստեղծվել են ավելի քան 150 բնակելի, հասարակական, արտադրական եւ այլ բնույթի կառույցներ ու համալիրներ, հուշարձաններ: Հայտնի աշխատանքներն են՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը եւ թանգարանի շենքը՝ 1968–1978 թթ., Հաղթանակի մոնումենտը՝ թանգարանը՝ 1950–1967 թթ., հուշարձան Գառնիի ճանապարհին՝ Մասիսի տաճարը (ժողովրդի տված անվամբ՝ Չարենցի կամար)՝ 1957 թ., «Արարատ» տրեստի գինու մառանները՝ 1937–1961 թթ., «Վերածնունդ» հուշահամալիրը՝ նվիրված Բաշ-Ապարանի հերոսամարտին՝ 1979 թ., Մուսա լեռան հերոսամարտի հուշարձանը՝ 1976 թ., Հաճընի 1920 թ. հերոսամարտի հուշարձանը՝ 1974 թ., «Երեւանի արեւմտյան մուտքը՝ Արծիվ շինարար» ուղենիշ-կոթողը՝ 1960 թ., «Վահագն վիշապաքաղ» հուշարձանը՝ 1962 թ., աղբյուր-հուշարձաններ՝ նվիրված Իտալիայի Կարրարա եւ Երեւան քույր քաղաքներին՝ 1965 թ., ուղենիշ-կոթողներ՝ Զվարթնոցի՝ 1954 թ., եւ Գեղարդի՝ 1959 թ., ճանապարհներին, աղբյուր-հուշարձաններ՝ Փարաքար, Բուրաստան, Կաթնաղբյուր, Կարբի գյուղերում, Սիսիանում, Ստեփանավանում եւ այլուր եւ այլն:

Եկեղեցաշինության տիրույթում եւս փայլել են Իսրայելյանի տաղանդն ու ջիղը: Վարպետը կյանքի վերջին շուրջ 2 տասնամյակի ընթացքում, իբրեւ Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի անդամ, մեծ եւ անփոխարինելի նպաստ է բերել Մայր Աթոռի շինարարական-վերանորոգչական եւ կառուցողական աշխատանքներին: 1955 թ. Մայր տաճարի վերանորոգման հանձնաժողովի կազմում այլ ճարտարապետների ու հայ մշակույթի մի շարք երեւելի գործիչների հետ մասնակցել է Մայր տաճարի նորոգման աշխատանքներին: Մայր տաճարի Իջման սուրբ սեղանը 1961 թ. վերակառուցվել է ըստ Իսրայելյանի հեղինակած նախագծի եւ քանդակազարդման էսքիզների: Նա է մշակել Մայր տաճարի Ավագ սեղանի նախագիծը՝ 1961 թ.:

1965 թ. Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի կապակցությամբ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բակում Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կանգնեցվել է Մեծ եղեռնի նահատակների հիշատակին նվիրված հուշարձան-խաչքար՝ Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված առաջին հուշարձանը Խորհրդային Հայաստանում: Էջմիածնի Մայր տաճարի բակի արեւելյան կողմում 1967 թ. Իսրայելյանի նախագծով կառուցվել է «Կաթնաղբյուր» հուշարձանը: Վարպետն իր ներդրումն է ունեցել նաեւ նոր Վեհարանի 1957 թ. վերակառուցման ու բարեկարգման գործում:

Իսրայելյանի նախագծով 1976 թ. վերակառուցվել է Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցին (վերակառուցման անվան տակ կառուցվել է. այն տարիներին լրիվ աներեւակայելի բան՝ մանավանդ Երեւանի կենտրոնում): Եկեղեցու վերակառուցմամբ, ինչպես վերակառուցված եկեղեցու օծման հանդիսավոր արարողության ժամանակ՝ 1976 թ. նոյեմբերի 3-ին, իր կարդացած քարոզում նշել է Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, *«...քաղաքամայր Երեւանն օժտվեց մի նոր զարդով, հայկական ճարտարապետության մի նոր կոթողով, աղոթքի սքանչելի նոր սրբավայրով»*:

Շարունակությունը՝ էջ 7

ՉԱՐԵՆՑՆ ԻՐ ՄԱՀՎԱՆ ԿՌԱՀՈՒՄՆԵՐՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 20

Չարենցն ապրում է իր խանդավառ ոգեւորության առաջին անմխիթար հուսահատության պահը:

Կարսն ընկավ, թուրքերը մտել էին Ալեքպոլ, դասալիքների դիմացն առնելու համար դիմեցին պատժիչ միջոցների՝ Երեւանի կենտրոնում կանգնեցնելով կախաղաններ: Կապուտաչյա հայրենիքի առասպելը հօդս էր ցնդում: Եվ Չարենցն ապրեց դասալիքների փոխարեն կախաղանին կախված լինելու՝ մահապարտի իր առաջին ողբերգությունը:

Զոհի, զոհաբերման, մահվան ուղեկից ներկայությունը դարձավ իրողություն.

Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար
Ու նայիրյան իմ երազի վերջին սիրով,–
Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ-
Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախված,
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախված
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,–
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա...
(I, 325)

Սա ինքնազոհաբերման խորապես գիտակցված այն վերջին ճիգն է, դեպի որը գալիս էր «Կապուտաչյա հայրենիք» (1915), «Դանթեական առասպել» (1915–1916), «Վահագն» (1916), «Ազգային երազ» (1917), «Հատված» (1918) պոեմներում ապրած հոգեբանական ծանր մղձավանջից հետո: Մի պահ թվաց, թե այդ մղձավանջը կփարատվի, բայց ապարդյուն:

Անհուսալի վիճակը ցավից ծամածռված դեմքին նաեւ խեղկատակի կերպարանք տվեց, ինչը եւս մահվան մի փոխաբերություն է: Ազգային վիճակի ծաղրուծանակը («Ազգային երազ») վերամարմնավորվեց «Փողոցային պչրուհուն» (1920) շարքի բալլադներում («Շամիրամ», «Անկումների սարսափից», «Խեղկատակ»): Ահա խեղկատակի վերածված մահվան դիմակը.

Ես երգում եմ - ակամա:
Ինչ էլ երգեմ. կուզեք - սեր,
Կուզեք - մահ:

Ես - խեղկատակ եմ հիմա...
(I, 218)

Այս տեսադաշտում առանձնանում է «Մարիոնետկա»-ն, ինչն ասես «Մահվան քայլերգ» լինի (1927-ին գրեց այդ վերնագրով բանաստեղծություն): Մարիոնետկան մարիոնետն է, այլ կերպ՝ խամաճիկը, խաղատիկնիկը: Այս դեպքում՝ մահվան դերակատարը: Համատարած մահվան մեջ, որ հայոց եղեռնն էր, ասես մեկը մահվան տիկնիկ է խաղացնում: Կշռույթն անգամ քայլերգային է, բայց մահվա՛ն, մահվա՛ն: Հայերենում քիչ հանդիպող ու դժվար ստեղծվող մաքուր յամբական ոտքեր են: Մահն է քայլում՝ «Գունատ, դեղին, գունատ, դեղին»: «Մեկ վեր, մեկ վար» մեքենայորեն շարժվում են ձեռքերը՝ «Ոտքը խփեց - մեռե՛լ, մեռե՛լ»: Աստիճանական զարգացումով ամեն ինչ հասնում է մահվան ճիչի.

Ու սո՛ւր ճչաց՝ կարծես բռնի
Աչքերն անշարժ հեռուն գամած.-
Այդպես հոգի՛ս պիտի մեռնի -
Կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց...
(I, 318)

Վերջին տողը նաեւ բանաստեղծության առաջին տողն է, բանաստեղծական կառուցվածքի այդ ձեւը կոչվում է օղակ, որ այս դեպքում այլ բան չէ, քան կախաղանի պարանը:

Այս բանաստեղծությունը՝ գրված 1920-ին, ըստ ամենայնի՝ առաջին «Մահվան տեսիլ»-ի (նույնպես գրված 1920-ին) հոգեբանական նախերգանքն է:

Չարենցի հետագա շրջանի՝ 1922–1933 թթ. ստեղծագործություններում մահվան ուղեկից գաղափարի ու ներկայության ժխտումն է: Դրա արտահայտությունն են «Պոեզուզոնա» (1922), «Ռոմանս անսեր» (1922), «Երկիր Նայիրի» (1921–1924), «Էպիքական լուսաբաց» (1930), «Գիրք ճանապարհի» (1933/1934) գրքերը, առանձին պոեմներ ու շարքեր:

Մահը հեռացավ, բայց չվերացավ, թաքնվեց մի դարանում եւ այս ընթացքում մեկ-մեկ հիշեցնում էր իրեն, իսկ 1935 թվականից հետո նորից պետք է դառնար տանու հյուր:

Այս շրջանում մահվան ծանր ապրումներ Չարենցն ունեցավ միայն 1926 թվականի սեպտեմբերի 5-ին կալանավորվելուց հետո, հատկապես երբ 1927 թ. 1–2-ի գիշերը՝ Նոր տարվա առաջին օրը, մահացավ կինը: Կնոջ հուղարկավորության ժամանակ եւ դրանից անմիջապես հետո նա ապրել է իր մահը: Այդ մասին գրում են թե՛ հուշագիրները եւ թե՛ ինքը՝ «Հիշողություններ Երեւանի Ուղղիչ տնից» (1927) հուշակնարկում:

Երկրի արթնացման, ազգային վերածննդի հույսը չէր լքում նրան: Մահվան դեմ պայքարելու միակ ճանապարհը դա էր: Խանդավառությունը նախ փոխվեց մորմոքի, հետո արդեն՝ կատարյալ հիասթափության:

Մորմոքի մի ծանր զգացում է իր իսկ մահվան հերթական կռահումը «Օ՜, լսի՛ր, կրքերի ժանտախտը...» (1929) տողով սկսվող բանաստեղծության մեջ: Երեւանի ուղղիչ տանն անցկացրած օրերի արձագանքով, առանձին հանցագործ դեմքերի հիշողությամբ Չարենցը պատկերացնում է իր հերթական մահվան դրվագը: Եվ քանի որ մեկ անգամ արդեն օրորվել էր կախաղանին (առաջին «Մահվան տեսիլ»-ը), հիմա էլ հարմար է գտնում կախվելը, բայց խորունկ մի ծաղրով ու արհամարհանքով՝ ուղղված իրեն այդ հոգեվիճակին հասցրած իրականությանը.

Օ, քեզ էլ է մահն օրորել
եւ քո՛ էլ օրերի միջով
անցել են, որպես ուրուներ -
եւ Մաչոն, եւ Խուժան Խաչոն...
Դու հիմա սիրում ես հիշել
ցնորքները նրանց մահածին,
բայց գիտե՞ս, որ մթին մի գիշեր
այդ տխուր մարդկանց խփեցին...
Եվ դժվա՛ր թե, դժվա՛ր թե դու էլ

այդ տխուր վախճանից խուսափես, -

միայն թե ես հիմա չգիտեմ՝
քեզ կախե՞ն պիտի, թե՞ խփեն...

Ես կարծում եմ - լավ է կախեն.

հիարկե, օդում դու մի քիչ

ոտներով պիտի խարխափես

եւ անձայն ճչաս... Եվ թեկուզ

ձգվելու է մարմինը քո նեղ,

փոխվելու է երգեցիկ լաթի,–

բայց գիտե՞ս - կախվածները գոնե

լեզու են հանում աշխարհին...
(«Գիրք մնացորդաց», 2017, էջ 140, այսուհետեւ՝ ԳՄ)

Շարունակությունը՝ էջ 7

ՊԱՀՔԻ ԽԵԳԻՐԸ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ի Ա ԺՈՂՈՎԱԾՈՒՄ

Նախ երկու խոսքով ասենք, թե ինչ է իրենից ներկայացնում կանոնագիտությունը: «Կանոն» բառով հայ մատենագրության մեջ դրսեւորված են այն որոշումներն ու գրությունները, որոնք շոշափել են ավանդական համակեցության ձեւերը, հասարակության անդամների փոխառնչությունները, ապրելու կերպը, քաղաքացիական, քրեական իրավունքի ու իրավաբանական հարցեր: Եվ կանոնագիտությունը ամփոփում է այս ամենը՝ իր մեջ ներառելով ոչ միայն օտար թարգմանական, այլեւ ինքնուրույն կանոնական որոշումներ: Եվ հարկ է նշել, որ հայ մատենագրության մեջ անչափ կարեւորելի է Հովհան Գ Օձնեցի Կաթողիկոսի (717–728) կազմած «Կանոնագիրք» կոչվող ժողովածուն: «Կանոնագիրք հայոց» ժողովածուի Ա հատորի մեջ ներառված է 24 կանոնախումբ. 16-ը՝ թարգմանական, 8-ը՝ ինքնուրույն:

Սույն աշխատանքում մենք անդրադարձ կկատարենք այդ կանոնախմբերում առկա **պահքի** թեմային, որը հետաքրքրական է եւ այսօր բավականին արդիական, քանզի պահքն այսօր Հայ Եկեղեցու ծիսակարգության անբաժան մասն է կազմում: «Պահք» հասկացությունը բացատրվում է հետեւյալ կերպ. պաս, պահոց օրեր, պահեցողություն, ծոմ, ծոմապահություն, որոշ կրոններում ուտելիքի կամ դրա առանձին տեսակների համար որոշ ժամկետով սահմանված արգելք, կերակուրներից լրիվ կամ մասնակի հրաժարում: Պահքի արտահայտած մյուս իմաստն ինքնաքննության ու խոկումի ժամանակաշրջանն է, հատկապես Մեծ պահոց շրջանը, երբ հավատացյալները ոչ միայն կերակուրներից են հրաժարվում, այլեւ հեռու են մնում մարմնական հաճույքներից, ապաշխարությամբ ու աղոթասացությամբ չափավոր, զուսպ կյանք վարում: Ըստ Հայ Եկեղեցու սահմանած կարգի՝ տարվա մոտ վեց ամիսը պահոց օրեր են *(տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, եր., 2002, էջ 843)*: Ասվածից պարզ է դառնում, թե ինչ նշանակություն է ունեցել հայոց մեջ պահքն ընդհանրապես: Դրա վերաբերյալ բազում կանոններ կան «Կանոնագիրք հայոց» ժողովածուում: Դրանք վերաբերում են Զատկի (քառասնորդաց) պահքին, հասարակաց պահքին, ուխտադրության պահքին, առաջավորի պահքին: Մեր աշխատանքի նպատակն այդ կանոնների վերհանումն է, դրանց բացատրությունը ու որոշակի բաղդատական աշխատանք կատարելը: Կարդալով բոլոր 24 կանոնախմբերը՝ մենք գտել ենք մեր թեմային առնչվող կանոնները եւ կկատարենք այդ կանոնների բովանդակային վերլուծություն ու համեմատություն:



Այսպես՝ մեզ հետաքրքրող հարցի առաջին անդրադարձը «Կանոնագիրք հայոց»-ի Ա ժողովածուում հանդիպում է 547 թ. Ներսեսի ու Ներշապուհի կողմից ասորերենից հայերեն թարգմանված առաքելական կանոնախմբի Ը կանոնում *(տե՛ս «Կանոնագիրք հայոց», հատոր Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, եր., 1964, էջ 32)*, որը վերաբերում է քառասնորդաց պահքին, այսինքն՝ Զատկից առաջ պահվող պահքին: Ավելի հասկանալի լինելու համար ասենք, որ խոսքը Մեծ պահքի մասին է: Մասնավորապես ասվում է, որ կարգեցին առաքյալներն ու հաստատությամբ դրեցին, որ 40 օր պահք պահեն (հավատացյալ ժողովուրդը) ու մաքրվեն ամենայն չարությունից, մեղքերից ու կերակուրներից մեր Փրկչի չարչարանքների օրից առաջ: Եվ նաեւ կարգեցին, որ այդ օրերին պետք է կարդալ մարգարեական գրքերը, առաքյալների գրքերը, որոնք պատմում են Տիրոջ չարչարանքների մասին եւ Փրկչի հարության վերաբերյալ գուշակություններ են:

Անչափ հետաքրքրական է Գանգրայի կանոնախմբի ԺԵ կանոնը *(տե՛ս «Կանոնագիրք հայոց», էջ 196)*, որը, սակայն, որեւէ օրենք չի սահմանում պահքի վերաբերյալ, այլ խոսում է այն մասին, որ հարկադրաբար մարդիկ թողնում են իրենց երեխաներին եւ չեն սնուցանում, մինչեւ երեխայի մեծանալը եւ եթե դա անում են վանականության ու պահքի պատճառով, թող նզովվեն: Սա չափազանց կարեւոր է, քանի որ տեսնում ենք, թե ընդհանրապես ինչ մեծ տեղ է հատկացված պահքին, բայց եթե դա պետք է լինի զոհաբերելով շատուշատ բաներ, ինչպիսիք են, օրինակ, առողջությունը, երեխաների խնամքը եւ այլն, ընդունելի չէ, եւ ավելի է գերադասվում պահք չպահելը, քան պահելը այդ ձեւով՝ ըստ նշյալ կանոնախմբի:

Գանգրայի կանոնախմբի ԺԸ կանոնը *(տե՛ս նույն տեղում)* վերաբերում է կիրակի օրը չպահելուն եւ այդ օրը որեւէ գործ անելուն: Կանոնի բացատրության մեջ ասվում է, թե եթե ինչ-որ մեկը արհամարհում է կիրակի օրվա պահքը եւ որեւէ գործ է կատարում, ինչպես այլ օրերի ժամանակ են կատարել, թող Աստծո արքայության մեջ հանգիստ չգտնեն, եւ մեծ ժողովը նզովում եւ մերժում է այսպիսի արարքը: Սա եւս մի հետաքրքիր դրվագ է, որը վերաբերում է կիրակի օրվա ընթացքում պահք պահելուն եւ կիրակի օրը սուրբ պահելուն ընդհանրապես: Հարկ է նշել, որ Գանգրայի ժողովի կանոնախումը «Կանոնագիրք հայոց»-ի Ա ժողովածուում առաջինն է, որը նզովք է նախատեսում այս կամ այն վատ արարքի կամ գործի համար: Ինչպես գիտենք, կանոնները հիմնականում ապաշխարություն էին նախատեսում՝ որպես խրատ, եւ միայն Շահապիվանի ժողովն էր, որ նախատեսում էր պատիժ, իսկ արդեն Գանգրայի կանոնախմբի որոշումներում մենք հանդիպում ենք նզովքի գաղափարին: Կարելի է ասել, որ այս ժողովի կանոններում բազմաթիվ են մեր թեմային աղերսվող կետերը: ԺԹ, Ի, ԻԱ կանոններում եւս հաջորդաբար խոսվում է պահքի մասին, եւ սահմանվում են որոշակի օրենքներ: Մասնավորաբար ԺԹ կանոնում *(նույն տեղում, էջ 198)* քննարկվում է հասարակաց պահքը պահելու մասին, եւ ասվում է, թե եթե ինչ-որ մեկը ցավի ու վշտի, անբարեհաճության ու ամբաստանության պատճառով չի պահի հասարակաց պահքը, նրան սպասվում է նզովում: Ի կանոնը *(տե՛ս նույն տեղում)* եւս բավական հետաքրքրական է, քանի որ ասում է՝ եթե մեկը կատարյալ հասակով է, առողջ մարմնով, քրիստոնյա է եւ չի պահում քառասնորդաց պահքը, թող նզովվի: Ինչպես արդեն խոսեցինք վերոնշյալում, պահքը թույլ էր տրվում լուծել հիվանդության, հղիության եւ այլ վիճակներում, երբ առողջությանը վնաս էր հասցվում: Սակայն եթե մարդ առողջ է եւ իրեն քրիստոնյա է համարում, պետք է պարտադիր պահի պահքը: Սակայն այստեղ խոսենք հոգեւոր պահքի մասին, քանզի պահքը լինում է երկու տեսակի՝ մարմնավոր ու հոգեւոր: Անչափ կարեւոր է հոգեւոր պահքը պահելը, որովհետեւ մարմնավոր պահքը անիմաստ կլինի, եթե այդ մարդը հայհոյի, վատ արարքներ գործի, ընկածին չօգնի եւ բարեգործություն չանի: Եվ այդ դեպքում մանմնավոր կամ մարմնական պահքը ձեռք կբերի զուտ ձեւական բնույթ: Սակայն այս մեր խոսքով բնավ չենք անտեսում մարմնական պահքի կարեւորությունը, ուղղակի հաստատում ենք, որ շատ կարեւոր են մարդու հոգու առողջությունը, հոգու մաքրությունը մեղքերից եւ հոգու խաղաղական վիճակը:

Շարունակելի

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809–1848)

ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 4–9, 11–12, 15–20

19-րդ դ. առաջին տասնամյակներում դեպի Կովկաս ռուսների առաջխաղացումը հայության շրջանում դարավոր տառապանքներից օգնությամբ ազատագրվելու, քրիստոնյա մեծ տերության հովանու ներքո հայոց անկախ պետականության վերականգման հույսեր էր արթնացրել: Երեւանի բերդի գրավումից հետո «Օրհնվի էն սհաթը, որ ռըսի ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց» արտահայտությունը ժողովրդի բնական ցանկությունն էր, որ իրեն բնորոշ անկեղծությամբ արտահայտել է Խ. Աբովյանն իր հերոսի միջոցով: Նրա աչքի առաջ էին Ներսես Աշտարակեցին ու Հ. Ալամդարյանը Տփղիսում հայ կամավորներ հավաքագրում եւ ուղարկում ռուսական բանակի կազմում պարսիկների դեմ կռվելու՝ Հայաստանի ազատագրության համար: Պատմական պահի թելադրանքով՝ հայերի ազատասիրական բաղձանքը համընկնում էր ռուսական տերության նվաճողական քաղաքականությանը: Երեւանի բերդի գրավումը մեծ հաղթանակ էր դեպի Հնդկաստան ռուսների արշավանքի ճանապարհին: Դա հայերի համար երազած ու իրականացած պատմական նպաստավոր պահ էր, մանավանդ տառապյալ արեւելահայի համար այդպիսի բարեբախտություն անհնար է երեւակայել. «Դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչ Երեւանու բերդի առնիլը հայերի համար»: Այլ բան է, որ մահմեդական շրջափակման մեջ քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներքո հայոց անկախ պետականության վերականգնման՝ Աբովյանի եւ մյուս հայ գործիչների սպասելիքները լիովին չարդարացան: Հետագա ռուս-թուրքական պատերազմներում էլ ռուսների հաղթանակով Հայաստանի ազատագրության հույսերը չարդարացան, եւ թուրքական բռնատիրությունից Արեւմտահայաստանի ազատագրության հարցը չլուծվեց՝ չնայած այն իրողությանը, որ տառապյալ հայերը չէին հուսահատվում եւ յուրային ու հարազատ կարծելով՝ Ռուսաստանն այլաբանորեն անվանում էին «Հյուսիսի հզոր արծիվ», «Մեծ քեռի» եւ այլն: Աշուղ-բանաստեղծ Ջիվանին, օրինակ, որ 19-րդ դ. վերջին տասնամյակներում եւ 20-րդ դ. սկզբին արեւմտահայության՝ թուրք բռնակալության անօրինակ դաժանություններից ազատագրվելու ժողովրդական իղձերի ու ձգտումների արտահայտիչն էր, իր քերթվածներից մեկում բանաձեւում էր.

Ո՛չ Ալփասլան, ո՛չ Լենկթեմուր, ո՛չ Չինգիզխան, ո՛չ Բուղան
Չեն կատարել այս տմարդի գայլավայել գործերը,
Հզոր արծվի ահեղ ձենը մինչ չհնչե Հյուսիսից,
Այս անիրավ մարդասպանից չեն ազատվիլ հայերը:

Կասկածները շարունակվեցին նաեւ հետագայում. ճի՞շտ էր արդյոք ռուսական կողմնորոշումը, մի՞թե այդ էր փրկության միակ ճիշտ ուղին: Տարակույսները խորացան այնքան, որ 1933 թ. Ե. Չարենցը Խ. Աբովյանի կյանքի վերջին «տագնապասիրտ» գիշերը պատկերող «Դեպի լյառը Մասիս» պոեմում, ակնարկելով «Վերք Հայաստանի» վեպում արծարծված ռուսական կողմնորոշումը, իրեն նույնպես կեղեքող հարցը բանաձեւեց հատուկ ընդգծումով.

Ի՞նչ է ասում այդ գիրքը եւ ի՞նչ է բարբառում:
Զուր չէ՞ արդյոք վատնել անհատնելի իր ձիրքը.
Եվ չի՞ եղել արդյոք իր ողջունած հեռուն
Մի թիարան վատթար, եւ այդ գիրքը՝
Իր արյունով, սրտի յուրաքանչյուր նյարդով,
Իր վերջին ճիգով հորինած...
Չէ՞ արդյոք խեղճության ու սխալի արդյունք՝
Սերունդների երթին ի վնաս...

Սո՞ւտ է եղել իր «երազանքը սուրբ», «ըղձանքը թաքուն» ու նվիրական: Կատարվածը անիմաստ է դարձնում իր ողջ կյանքը եւ սին ու աննպատակ «ամպաշեն մի հարց»: Իրարահաջորդ հոգեմաշ ծանր խոհերն ի վերջո փարատվում են «հեղեղանման հորդացող» հայ բարբառի առկայությամբ, հայոց լեզվի կարկաչն իսկապես չի ստում.

Բայց ո՛չ, ի՛նչ էլ լինի - այնուամենայնիվ
Հո չի՞ ստում կարկաչն այս բարբառի...
... Ո՛չ, չի՛ ստում. ահավասի՛կ գարնան
Հեղեղների նման հորդանում է իր դեմ...

Գրվելուց շուրջ մեկ դար հետո՝ 1930-ական թթ. մղձավանջային ժամանակներում Խ. Աբովյանի վեպի խորհուրդն այսպես է ընկալել մեծահանճար Ե. Չարենցը, որը աշխարհի մյուս մեծ երեւույթների՝ Հոմերոսի, Խորենացու, Նարեկացու, Դանտեի, Գյոթեի, Պուշկինի, Էդգար Պոյի հետ միասին Խ. Աբովյանին համարում էր իրեն բախտակից ու հոգեկից հենարաններից մեկը: Վեպը, իրոք, հայ նոր գրականության մեծ սկիզբն է, Հայաստան աշխարհի փառաբանման, հայոց լեզվի պանծացման եւ հայ ոգու ամենից շքեղ դրսեւորումներից մեկը:

Վեպի չափածո հատվածները: Աբովյանի գեղարվեստական արձակ շարադրանքն առանց այն էլ բանաստեղծական է, որովհետեւ նա շռայլորեն օգտագործել է պատկերավորման-արտահայտչական գրեթե բոլոր միջոցները, որով հասել է պատկերածը տեսանելի եւ շոշափելի դարձնելու արվեստի բարձունքներին: Դա անհերքելիորեն երեւում է Հայաստանի սաստիկ ձմեռն ու ամառային անտանելի շոգը նկարագրելիս, բնության հրաշալիքները պատկերելիս, ժողովրդական տոնախմբությունները ներկայացնելիս, սիրելի հերոսներին բնորոշելիս ու վիպական գործողությունների մեջ նրանց ցուցադրելիս, ինչպես նաեւ արգահատելի տիպերի՝ Հասան խանի, Նաղի խանի, Օքյուզ աղայի տմարդի բնավորության հանդեպ հեղինակային վերաբերմունք արտահայտելիս:

Առաջին տարբերակն ավարտելով՝ Աբովյանն ընկալել էր վեպի մի էական պակասություն՝ պատկերվող երեւույթների նկատմամբ զգացմունքային վերաբերմունքի անբավարարությունը: Որքան էլ հուզական էր նրա արձակը, այնուամենայնիվ չափածո խոսքի եւ մանավանդ երգվող տեքստի զգացմունքային խորությունն ու անկեղծությունը չէր ունենա: Աղասին, որ «լավ սազ նվագել գիտեր», հեղինակավոր աշուղների պես պետք է նաեւ երգեր տարբեր եղանակներով, ասենք, «Քեշիշ օղլու գունով»: Բացի Գեւորգ Սմբատյանին նվիրված ընծայականից՝ վեպում ընդգրկված չափածո մյուս հատվածները, որ վիպական հյուսվածքում հարաբերականորեն ինքնուրույն միավորներ են, երգվել են այս կամ այն եղանակով, որն էլ հիմք է տվել որոշ մեկնաբանների՝ այն համեմատելու արեւելյան աշուղական սիրավեպերի հետ: Հաճախ էլ հեղինակն իր գլխավոր մտքերն ու հայ «նորահաս սերունդներին» ուղղված պատգամներն ավելի տպավորիչ արտահայտեու համար ներկայացրել է չափածո բանաձեւումներով:

Աղասու արձակ նկարագրությունն անբավարար համարելով՝ Աբովյանը հենց առաջին գլխում բերում է նրան նվիրված 9 քառատող տնից կազմված «ժողովրդական» խաղը, որ մարդիկ երգում էին եւ սովորեցնում իրենց երեխաներին.

Աղասի ջան՝ գլխիդ ղուրբան,
Դու ես մեր թագն ու պարծանքը.
Աշխարքս որ բոլոր ման գան՝
Ո՞վ կըլի հատդ, դու մեր կյանքը:

Առաջին գլխի վերջնամասում Սարդարի ֆառաշներին պատուհասելուց հետո վիրավոր Աղասուն նրա առյուծասիրտ ընկերները փախցնում են Ապարանի կողմերը: Անսպասելի այս դեպքը կատարվում է ակնթարթային այնպիսի արագությամբ, որ Աղասու հարազատներն ու բոլոր քանաքեռցիները կարծում են, թե նրան տարել են Սարդարի մարդիկ: Աղասու հարազատների ողբն ու կականը, քանաքեռցիների ցավի ու ափսոսանքի աղաղակը պատկերված են զգացմունքային հզոր շնչով: Սակայն գլուխն ավարտվում է բավական ընդարձակ, 15 վանկանի տողերով, 8 քառատող տներից կազմված այն հատվածով, որ հեղինակի չափածո մռունչն է, զգաստացնող համամարդկային կոչը՝ բոլոր ժամանակներում հայության եւ հալածվող մյուս ժողովուրդների հանդեպ գործադրվող անարդարությունների դեմ.

Վա՛յ էն ազգին, որ աշխարհումն անտեր ա,
Վա՛յ էն երկրին, որ թշնամու գերի ա,
Վա՛յ էն խալխին, որ իր կյանքն ու աշխարհքը
Չի պահպանիլ ու հարամու ձեռ կտա:

Վեպի երկրորդ գլուխն սկսվում է մի չափածո բնաբանով, որը թափանցիկ ակնարկներ ունի նրա պատկերածի եւ հատկապես Երեւանի բերդի մասին: Այս պարագայում չափածո խոսքին հաջորդում է բանաստեղծական հզոր արձակը, որ նույնպես կարելի է չափականի վերածել, մանավանդ որ Աբովյանի արձակն էլ է ռիթմական եւ ունի չափածոյի հատկանիշներ: Ներկայացվող հատվածում պարզապես փայլում է Աբովյան նկարագրի մեծ վարպետը:

Գեղարվեստական պատկերի գեղանկարչական հագեցվածության մասին պատկերացումները կարող են ճշգրտվել Երեւանի բերդի սարսափների աբովյանական նկարագրության օրինակով. «Լեռ քարափի վրա՝ ցից գլուխը բարձրացնում, թամաշա յա անում հանդարտ՝ հազար գլխանի դեւի պես՝ **Երեւանու՝** հազար տարեկան քավթառ, չորս կողմը խանդակով կապած, բրջերով դայիմացրած, սուր-սուր ատամները գլխին շարած, հինգ գազաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մեկ ոտը **Կոնդումը**, մեկ ոտը **Դամուրբուլաղի** գլխին դրած, մեկ բերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը երկինք ցցած, լեն փեշերը երկրում փռած, անամոթ երեսը կոկած, սվաղած, ջուխտ չանգերով Զանգվի՝ քարոտ, զարհուրելի, սեւադեմ ձորը խտտած, դոշին կպցրած, անմազ, անլեզու, մարդակեր բերդը, ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ագահ աչքերը գետնին քցում, որ միամիտ տեսնողին դհա շուտով խաբի, դհա հեշտ իր ծոցը քաշի ու բիրադի, անձեն, անսաս քաշի, կուլ տա, փչացնի» *(նույն տեղում, էջ 53)*: Արձակում էլ Աբովյանի զգացմունքները հորդում են հեղեղի պես, չափածոյում էլ:

Հետաքրքիր է, որ ուրիշ հեղինակներ իրենց զգացմունքները չափածո շարադրելիս կաշկանվելով են դիմում արձակի, իսկ Աբովյանն այնքան է հմտացած եղել ոտանավոր շարադրանքի մեջ, որ զգացմունքների ու մտքերի հզոր ու անզսպելի հոսանքն արտահայտել է թե՛ արձակ, թե՛ չափածո եւ դյուրությամբ անցել է մեկից մյուսին: Նկատվում է նաեւ, որ գրաբար չափածոյի մեջ Աբովյանն ավելի հմուտ է, քան աշխարհաբարի, որովհետեւ նոր-նոր ձեւավորվող արեւելահայ աշխարհաբար բանաստեղծական լեզուն դեռեւս անմշակ էր եւ ձեռք չէր բերել թումանյանական-իսահակյանական-տերյանական-չարենցյան-շիրազյան-սեւակյան ու սահյանական մակարդակ:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՉԱՐԵՆՑՆ ԻՐ ՄԱՀՎԱՆ ԿՌԱՀՈՒՄՆԵՐՈՒՄ

Սկիզբը՝ էջ 5

1925-ին «ինքնասպանություն» գործեց Եսենինը, 1930-ին՝ Մայակովսկին: Ռուսաստանին դեմք ու դիմագիծ տվող երկու նշանավոր բանաստեղծները երիտասարդ տարիքում հեռացան կյանքից: Ինքնասպանությունը պաշտոնական հաղորդագրությունն էր, այսօրվա ուսումնասիրությունները հանգեցնում են պետական սպանության վարկածին:

Չարենցն իրեն տեսնում էր այդ բանաստեղծների շարքում: Հիասթափությունը հեղափոխությունից, հուսահատությունը երկրի քաղաքական վիճակից խորացել էին:

Հուշագիրները վկայում են, որ 1931-ի ամռանը Չարենցն ինքնասպանության փորձ է արել: Կտրել է զարկերակը, բայց հասցրել են փրկել:

Մահվան ուրվականն ուղեկցել է նաեւ այլ առիթներով, ինչի մասին գրել է Ռեգինա Ղազարյանը: Անմիջապես ինքնասպանության փորձից առաջ Չարենցը Ռեգինա Ղազարյանի հետ վերադարձել է Գուսան Սերոբի տանը կազմակերպված խնջույքից եւ «Երեւան» հայուրանոցում ուղեկցին՝ Ռեգինային, ում անվանակոչել էր Ռոլան, ասել՝ պատշգամբի դռան առջեւի ռելսի կտորը բեր, որ այդ երկաթով գլուխս ջարդեմ:

Սա իր ամբողջ ներքին դժգոհությունն ու անբավարարվածությունն էր, որ վերածվել էր ինքնաոչնչացման մղձավանջի:

Մահվան ջղաձիգ ապրումները նրան պաշարեցին նաեւ «Գիրք ճանապարհի»-ն կալանելուց հետո: Մարիետա Շահինյանին հասցեագրված «1. XII. 1933» թվակիր նամակում իրեն համակած հոգեբանական ծանր վիճակի մասին ուղղակի գրում էր. «Չէ՞ որ կարելի է խելագարվել <...>: Ի՞նչ է սա <...>, եթե ոչ խայտառակություն եւ ծաղր ու ծանակ <...>, 20 տարվա ստաժ ունեցող խորհրդային գրողի <...> հանդեպ: <...> չէ՞ որ սա խաղ է գրողի կյանքի ու հեղինակության հետ: <...>: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ ապրումներ ես պիտի ունենայի այդ օրերին. Չէ՞ որ ես կարող էի սպանել եւ ինձ, եւ իմ ընտանիքը, խելագարվել, եւ ես զարմանում եմ, թե ինչու դա չարեցի: <...>: Օգնեցե՛ք ինձ: Եվ կրկին, վերջին անգամ աղաչում եմ. Օգնեցե՛ք ինձ» («Նորահայտ էջեր», 1966, էջ 268–273, այսուհետեւ՝ ՆԷ):

1935-ին Չարենցին՝ որպես ահաբեկչի, փետրվար-մարտ ամիսներին ենթարկեցին հարցաքննությունների: ՆԳԺԿ-ն արդեն հետապնդում էր նրան: Հետեւանքն այն եղավ, որ Չարենցը՝ որպես անվստահելի քաղաքացի եւ գրող, հեռացվեց հրատարակչությունից եւ իր «Հայտարարության» քննարկումից հետո՝ նաեւ գրողների միության շարքերից: Այս ամենը ժամանակին ընկալվեց եւ ներկայացվեց քաղաքական երանգավորումով:

Որպես ահաբեկչի՝ Չարենցի դեմ մեղադրանքն այլ նախապատմություն ուներ, որ «Գիրք Ճանապարհի»-ն արգելափակվելու պատճառով ՀԿ(բ)Կ ագիտպրուտի բաժնի վարիչ Լեւոն Արիսյանի կապակցությամբ ասել էր՝ տամ, սատկացնես: Այդ պատճառով նրան մեկ անգամ ստուգել-խուզարկել էին Կենտկոմի հերթապահ ոստիկանները, ինչը խորապես զայրացրել էր եւ դրդել գրելու.

Կոչված եմ ահա այսօր ես Չեկա...

Կարծես թե ուրիշ հերյուրանք չկա,

Որով «օրենքից դուրս» համարեն ինձ...

Մատնում է մի «հին բարեկամ» Մակինց,

«Գրողները» ինձ «դուրս են շպրտում

Դրաստամատյան Գրական Տնից...»,

Իսկ վերից Խանջյանն ինքն է հոխորտում,

Թե ինձ «կհանի իմ հիմար քնից...»:
.....
Էհ, վաղո՞ւց եմ ես «քնից» արթնացել,–

Այդ դո՛ւք եք ավաղ, քնած մնացել...
(ՆԷ, էջ 88)

Կողքին թեք գրել է. «Ուրեմն այսպե՞ս... իբրեւ «տեռորիստ»:

Չարենցը մի կողմից հերոսացման սխրանքի մեջ էր՝ «Հերո՛ս եմ ու մարդ!!!», մյուս կողմից՝ մահվան մոտեցող ապրումների: Հարցաքննությունների օրերը դարձան բանաստեղծությունների վերնագրեր, եւ այդ կապակցությամբ գրեց.

... Եվ ի՞նչ պատահեց կյանքում արդարեւ,
Որ ձեռքս հանկած, հոժար, ինքնիրեն,
Իմ գրած բոլոր տողերի վերեւ
Չոր թվականներ սկսեց գրել...
Եվ վերնագրերն այդ սովորական,
Որ բառեր էին՝ գրված թանաքով,–
Խորհրդանիշեր դարձան մոգական՝
Ինչպես խաչն առաջ - մահ նշանակող:
(«Անտիպ եւ չհավաքված երկեր», 1983, էջ 147, այսուհետեւ՝ ԱՉԵ)

Վերնագրված է «26. VIII. 1936»: Այսպիսի թվային վերնագրեր էլի կան:

Չարենցի մահվան մորմոքները խորացան եւ արտահայտվեցին «Դոֆինը նայիրական» սոնետների շարքում (29. VII, XI.1936)՝ գրված ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի սպանության կապակցությամբ, Նարեկացուն ոգեկոչող տետրապտիքոսի սոնետներում՝ «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո», աշնան երգերում՝ «Վերադարձ աշուն», «Աշնան երգ» (նույն վերնագրով երկու տարբեր գործ), «Այս աշունը...», «Աշունը, ա՜խ...», «Նույն երգն է կրկնում աշունը...», «Ցո՛ւրտ է, աշո՛ւն է...», «Շաչում է այս աշնան քամին...»: Ավելի վաղ գրած «Աշուն է նստել սեղանիս» (1928), «Զարմանալի աշուն» (1931) գործերում երանգներն այլ են: Վերջինում՝ «Շրշուն աշունն այսօր ինձ գործ ու կյանք վսեմ // Եվ ոչ թե մուժ, ու մահ, ու անկում է գուժում...»: Իսկ հետո արդեն աշնան սառը շունչն է՝ որպես մահվան գույժ:

Անձնական երգերում՝ «Հուսահատության ժամերին իմ այս...», «Տխրությունը մեր անեղծ...», «Շնորհակալ եմ, Տեր...» («23.X.1936», ըստ ԳԱԹ ՉՖ բնագրի՝ «22.X.1936»), «Վերջին աղոթք», «Անվերնագիր», «Իմ լերան աղոթքը», «Սեւ կախաղան», մայրամուտի երգերում՝ «Մայրամուտը» (4 գործ), «Մայրամուտի երգ», «Մայրամուտներ», «Մայրամուտային»: Ազգային խոհերում՝ «Որպես գորշ, դեղին տերեւներ», «Խոհ», «Կոմիտասի հիշատակին»:

Իսպանական շարքում՝ «Իսպանիա», «Օ՜, պատմություն, օ՜, կյանք իսպանական», «Կրկի՛ն, կրկի՛ն, Իսպանիա...», «Արշավում է եւ քո, եւ աշխարհի վրա...»:

Զառանցական մղձավանջներում՝ «Զառանցանք», «Էկլեզիաստես», «Զառանցանք զառանցանքում», գրական հարաբերությունների անդրադարձներում՝ «Պոետի վիշտը», «Տխուր կարուսել», «Իջել է այսօր Հելիկոնն ամբողջ», «Եվ թող վերջին անգամ...», «Այսպես-նախքան իջնի վարագույրը...», «Նայիրյան օրիորդներին», հակաստալինյան մերկացումների ու առանձին բանաստեղծությունների մեջ՝ «Հուզումների լեզուն», «Թմբուկ են խփում...», «Ցնծություն է, ծիծաղ...», «Ինչ որ հույս էր», «Հոտ է գալիս կրկին արյան», «Կեսօր», «Բարձրավիզ կոշիկներ հագին...», «Միջնադարյան կացին», «Թիֆլիսցի կինտոն»: Այս բոլոր գործերի մեջ մահվան ուրվականն է, որ հայտնվում է ամեն տեղ, որ իրենով լցրել է տարածությունը, որ հետապնդում է բոլորին եւ սեւ կախաղանի օղակն օրեցօր ավելի է սեղմում բանաստեղծի պարանոցին:

Մահվան խորհրդանշանները շատ են՝ սկսած զառանցանքի մեջ հայտնված հտպիտից, մինչեւ արեգնացյալ կացին եւ «մահ» բառը մահվան շուրջպար դարձնող «մ» տառերի բաղաձայնույթը:

Ահա հտպիտը («Զառանցանք», 1935).

Ատամնաթափ մի մարդ, գանգը նման կապկի,
Նստել էր կոկորդիս եւ ինձ խեղդում էր...
Թույն էր թորում նա իմ գիշերային շապկին-
Եվ անունը նրա... «Քնքշություն» էր...
(ԱՉԵ, 95)

Ահա մահվան շուրջպարը («Մայրամուտ», V. 1937).

Մառ, մորմոքում է մայրամուտը,
Մահվան մոխիր է մովից մաղում,–
Մեռնում է մութը մթնշաղում,–
Մառ մորմոքում է մայրամուտը:–
Մտորումներս մահ են, մութ են,
Մոխրե մտքեր են միայն մխում,–
Եվ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մրուր է մովից մաղում...
(ԱՉԵ, 247)

Ոգեղեն հաղթանակներով հանդերձ՝ Չարենցն զգում էր, որ պարտվեց: Իրականության լծակները քաղաքական հանցագործների ձեռքում էին: Ինչքա՜ն պիտի գլուխը խփեր պատին եւ ձեռքը զարկեր սուրսայր հերյունին, որին ժողովուրդն ասում է բիզ: Իր եւ իր նմանների ժամանակը չէր: Ժողովրդի բանաստեղծը հռչակվել էր ժողովրդի թշնամի եւ ընդդիմադիր բանաստեղծ: 1936 թ. դեկտեմբերի 10-ին գրեց.

Մեզ գլխատում են մինչեւ հիմա՝
– Հանուն ոսկու, արյան կամ հավատի,–
– Հանուն կամքի մեր պիղծ ու դավադիր,
Հանուն ոխի՝ տանող մինչեւ ի մահ...

Մեզ գլխատում են մինչեւ հիմա՝
– Հանուն ցեղի՝ ընդմիշտ մեզ թշնամի,–
– Հանուն մինարեի՝ ընդդեմ ժամի,
– Հանուն կյանքի՝ մեր մեջ տեսնելով մո՛ւժ ու մահ...

Հաջորդ օրը՝ առավոտյան, ավելացրեց.

Այլեւս ինչ մնաց քեզ՝ խնդրելու կյանքից,–
Օ՜, անհանգիստ իմ սիրտ ու անկարող,
Մ՛խ, խոնջենքի՜ միայն անեզրական կարոտ,–
Խաղաղության անխոհ,– մահվան հանգիստ...
(ԱՉԵ, 199, 200)

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր

ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ – 110

Սկիզբը՝ էջ 4

Ռաֆայել Իսրայելյանի նախագծով ու առաջարկությամբ է վերանորոգվել ու վերակառուցվել Երեւանի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին՝ 1973 թ.: Վաղահաս մահը, ցավոք, զրկեց վարպետին իր նախագիծ-առաջարկն ավարտին հասցնելու հնարավորությունից: Ավելի քան տասը տարի անց նախաձեռնվեցին գործնական քայլեր եկեղեցու հիմնական վերանորոգման ու վերակառուցման ուղղությամբ: Իսրայելյանի նախագիծն ու առաջարկը կյանքի կոչեցին նրա որդին՝ ճարտարապետ Արեգ Իսրայելյանը եւ ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանը: Իսրայելյանը մասնակցել է Սուրբ Հռիփսիմե եկեղեցու վերանորոգմանն ու բարեկարգմանը (ջահն ու աղբյուրը)՝ 1957 թ., իր ավանդն է ունեցել նաեւ 1961 թ. Օշականի եկեղեցու բարեկարգման աշխատանքներում: Հայրապետական «Հայկաշեն» ամառանոցի շենքը նախագծողը եւս Ռաֆայել Իսրայելյանն է՝ 1971թ.: Նրա նախագծերով կառուցվել են Սուրբ Հռիփսիմե եկեղեցու բակի աղբյուրը՝ 1958 թ., Գեղարդի վանքի համալիրի աղբյուրը՝ 1959 թ., Սուրբ Գայանե եկեղեցու բակի աղբյուրը՝ 1972 թ.:

Իսրայելյանական տաղանդից բաժին է հասել նաեւ Սփյուռքին. նրա նախագծերով են կառուցվել Միլանի հայոց Սուրբ Քառասուն մանկանց՝ 1958 թ., Նյու Յորքի Սուրբ Վարդան՝ 1968 թ., եւ Մոնտեվիդեոյի հայոց՝ 1968 թ., եկեղեցիները: Եվ Հայաստանում, եւ արտերկրում կառուցված եկեղեցական շինությունները կրում են թե՛ տվյալ տեղին հատուկ եւ թե՛ Հայ Առաքելական Եկեղեցուն հարիր կերպար՝ արտահայտելով իսրայելյանական ոճը:

Գիտության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ Ռաֆայել Իսրայելյանի գործերին հատուկ են կոմպոզիցիոն բազմազանությունը, ձեւերի եւ մանրամասների գեղարվեստական հարստությունն ու բարձր ճաշակը, նորարարական շունչը եւ վառ անհատականությունը:

Իսրայելյանը մեծ վարպետ էր ինչպես մոնումենտալ, հերոսական կառույցների ու շինությունների եւ ոչ պակաս մոնումենտալ հուշակոթողների, այնպես էլ ճարտարապետական փոքր ձեւերի, կիրառական արվեստի նմուշների, հուշարձան-աղբյուրների. ողջ Հայաստանով մեկ սփռված են նրա՝ մեծ մասամբ առանց որեւէ պարգեւավճարի (նա ընդհանրապես մեծ մասամբ ստեղծագործել է առանց վարձատրության) կառուցած աղբյուր-հուշարձանները: Ճարտարապետական փոքր ձեւերի մեջ (աղբյուր-հուշարձաններ, հուշակոթողներ) Իսրայելյանը չգերազանցված վարպետ է եւ այդ մոռացված ուղղությանը հարություն տվող: Նա հիմքը դրեց աղբյուրի ճարտարապետական այն տեսակի, որը պահպանելու էր մեր ժողովրդի զոհված զավակների հիշատակը: Աղբյուր-հուշարձանը՝ իբրեւ ճարտարապետական կառույցի տեսակ, կապվեց նրա անվան հետ:

Իսրայելյանի աշխատանքներին շատ հատկանշական են արձանագրությունները: Նրա շինությունների վրա կարելի է հանդիպել ժողովրդական առածների, հայտնի բանաստեղծությունների հայրենասիրական տողերի, օրինակ՝ հանճարեղ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» ստեղծագործության տողերը, ինչպես ինքը՝ Իսրայելյանն էր ասում, «Մասիսի տաճարի» կամարի եզրով մեկ՝ «Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա /Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում»: Այս վիմագիր արձանագրությունները վկայում են տարբեր իրողությունների, նաեւ տվյալ վայրում տեղի ունեցած պատմական իրադարձությունների մասին, ազգային իմաստություններ են փոխանցում սերունդներին, ունեն խրատական բնույթ: Արձանագրություններում հեղինակը ոչ միայն իր մտքերն ու պատգամներն է հղում գալիք սերունդներին, այլեւ հայտնում իր վերաբերմունքն ու խոնարհումը այս կամ այն պատմական իրադարձության, հայ ժողովրդի ճակատագրի ու ապագայի, ազգի մեծերի նկատմամբ:

Եղեռնին նվիրված հուշարձան-խաչքարը Մայր Աթոռի տարածքում

Շարունակելի

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

ՏԻՐՈՋ ՎԵՐՋԻՆ ԱՂՈԹՔԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 5, 17–18

Վերածննդի շրջանի նկարիչներն իրենց «Գեթսեմանիի աղոթքը» կտավներում հիմնականում տուրք են տվել ավետարանական սյուժեի՝ կերպարվեստի լեզվով վերապատմելուն՝ կարեւորելով ոչ միայն աղոթող Տիրոջը՝ հնարավորինս ընդգծելով Նրա՝ խաչի վրա մահն ընդունելու

Ալբրեխտ Դյուրեր (1471–1528)

նախընթաց հույզ ու ապրումների, սպասվող մարմնավոր տանջանքների, մարդկային բնությանը բնորոշ հոգեկան ծանր տվայտանքների ողջ լարվածությունը, այլեւ քնով անցած առաքյալներին, հաճախ նաեւ հրեշտակին, որն «ուժ էր տալիս Նրան», Հիսուսի հետեւից եկող զինվորներին եւ, ըստ իրենց պատկերացումների, Գեթսեմանիի այգու տեղանքին՝ ժայռապատկերներով ու ձիթենիների պուրակով, հեռվից երեւացող շինություններով եւ այլ ատրիբուտներով: Որոշ նկարիչներ, միտումնավոր կերպով, աղոթող Տիրոջ հետ առաջին պլան են բերել նաեւ քնած առաքյալներին՝ Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին (Ջովանի Բելլինի, Սանդրո Բոտիչելլի, Լեոնարդո Բասսանո, Գուստավ Դորե եւ այլք): Այս մոտեցումն առաջին հայացքից կարող է թվալ հորինվածքային լուծումի նախընտրելի տարբերակ՝ նկարի կենտրոնը կոմպոզիցիայի առանցքը դարձնելու ընդունված միտումով: Սակայն՝ դա առաջին հայացքից: Հիշենք՝ աղոթքի նստելուց առաջ ինչ ասաց Տերը աշակերտներին. *«Հոգիս տխուր է մահու չափ. այստեղ մնացեք եւ Ինձ հետ հսկեցեք»* (Մատթ. ԻՋ 38): Սա նշանակում է, որ եթե Հիսուսը, լինելով Աստծո Որդի, կարող էր ունենալ հոգեկան ապրումներ, ինչու չէ՝ նաեւ վախ, այսինքն՝ մարմնավոր թուլություն, ապա որքան տկար պիտի լինեին առաքյալները՝ մանավանդ Խորհրդավոր ընթրիքից հետո, երբ տեղի ունեցած խորհրդապաշտական արարողությունների իմաստը լիովին չէին ըմբռնել եւ բնականաբար հոգեկան տվայտանքների մեջ էին: Նրանք միմիայն մարդու որդիներ էին եւ դեռեւս լցված չէին Սուրբ Հոգով՝ չնայած այն բանի, որ հենց նրանք էին անսակարկ ընդունում Ուսուցչի՝ Աստված լինելու հանգամանքը *(տես թերթի թիվ 5)*: Նրանց համար դեռեւս անհասկանալի էին Ուսուցչի՝ ***«...եթե չուտեք մարդու Որդու մարմինը եւ չըմպեք Նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա»*** խոսքերը *(Հովհ. Զ 54)*, եւ ընդամենը փորձում էին այսպես մտորել. *«Խիստ է այդ խոսքը. ո՞վ կարող է այն լսել» (Հովհ. Զ 61)*: Հետագայում՝ Տիրոջ հարություն առնելուց եւ հոգեգալստից հետո, տեսանք, թե ինչպես այս երեք աշակերտներն էլ արթնացան «քնից», «զգեստավորվեցին» Սուրբ Հոգով եւ արիաբար մարտահրավեր նետելով հոգեւոր տկարությանը՝ դարձան Տիրոջ Խոսքի անկոտրում քարոզիչներ, իրենց Ուսուցչի պես անսակարկ տարան հետապնդումները, նվաստացումները, բանտ ընկան, աքսորվեցին եւ վերջապես նաեւ խաչ ելան (Պետրոս), գլխատվեցին (Հակոբոս)՝ բացառությամբ Հովհաննեսի, որը, ինչպես գիտենք, այլ առաքելություն ուներ. նա պիտի հոգ տաներ Տիրամոր մասին եւ պիտի դառնար Ավետարաններից մեկի եւ «Հայտնության» հեղինակը:

Այս ամենը նկատի ունենալով է, որ նկարիչները քնած առաքյալներին փորձել են բերել առաջին պլան՝ ասելու համար, որ պատահական չէր, որ Տերը նրանց էր վերցրել Իր հետ, քանզի նրանք էին, որ ավելի ուշ պիտի կարողանային **«այո՛»** պատասխանել Ուսուցչի հարցին, թե՝ ***«...կարո՞ղ եք խմել այն բաժակը, որ ես խմելու եմ...»***:

Դժվար է թվարկել այն բոլոր մեծանուն նկարիչներին, ովքեր փորձել են անդրադառնալ ավետարանական այս թեմային՝ ըստ իրենց ընկալումների, զգացումների, ապրումների, մեկնումների: Համարյա բոլորը մահից առաջ աղոթող Տիրոջ կերպարի մեջ բնականաբար տեսել են մարդ արարածին, Նրա հոգեվիճակը, Նրա ճակատագիրը, երբ դժվար ու դժնդակ պահերին լքում են Նրան, թողնում մենակ: Այդ ողբերգությունը ոչ միայն անհատն է ապրում, այլեւ, ինչպես մարդկության պատմությունն է վկայում, նաեւ ամբողջական ազգեր ու ժողովուրդներ, տոհմեր ու համայնքներ:

16-րդ դարի իսպանացի (ծագումով հույն) նկարիչ, էքսպրեսիոնիզմի հիմնադիր Էլ Գրեկոյի (1541–1614) «Գեթսեմանիի աղոթքը»՝ իր դրամատիզմով, արտահայտչականությամբ, ֆիգուրների պլաստիկ լուծումներով, խորհրդանշական գույներով ասելիքը մատուցելու վարպետությամբ,

Էլ Գրեկո (1541–1614)

զարմանալի հնչեղություն ունի, խորապես ապրվածություն: Ինչպես այդ շրջանի շատ նկարիչներ, Էլ Գրեկոն նույնպես քաջատեղյակ էր գույների սիմվոլիկային: Այն, որ թե՛ միջնադարյան եւ թե՛ Վերածննդի նկարիչները մտածել են նաեւ խորհրդանիշերով, ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրում ենք հենց թեկուզ «Գեթսեմանիի աղոթքին» անդրադարձած նկարիչների գունանկարները: Համարյա բոլոր նկարիչները Տիրոջը պատկերել են կարմիր պարեգոտով (հուն.՝ քիտոն, հռոմ.՝ տունիկա) կամ թիկնոցով, երբ հայտնի է, որ դեռեւս Հիսուսի ժամանակներում դրանք լինում էին դարչնագույն, դեղնավուն, թուխ կամ սպիտակ ու կապույտ զոլերով, բայց ո՛չ երբեք՝ կարմիր: Քրիստոնեական մշակույթում կարմիրը համարվում է զոհաբերության խորհրդանիշ, եւ հենց այս նպատակով էլ նկարիչներն ավանդական կապույտի փոխարեն *(Խորհրդանիշերի ընդհանրական համակարգում կապույտը համարվում է նաեւ հավատի, հոգեւոր կյանքի նշան. պետք է նկատել, որ եւ Տիրոջը, եւ Տիրամորը հիմնականում պատկերել են կապույտների մեջ, եթե ոչ հագուստը, ապա թիկնոցը (Հիսուսի) կամ գլխաշորը (Տիրամոր)* «Գեթսեմանիի աղոթքի» պատկերներում Տիրոջը կարմիր են «հագցրել»:

Էլ Գրեկոյի կտավներում եւս Հիսուս Քրիստոսը կարմրազգեստ է, իսկ ծնկների տակ ընկած թիկնոցը՝ կապտամոխրագույն *(մոխրագույնը հնազանդության եւ աշխարհից հրաժարումի խորհուրդ ունի)*: Կտավի առաջին պլանում պատկերված է Տերը՝ մեկ ոտքի վրա ծնկած, ձեռքերի դիրքը եւ հայացքը ժեստերի լեզվով արտահայտում են՝ «հոժար եմ»: Հայացքն ուղղված է դիմացի բարձունքին կանգնած դեղնազգեստ *(դեղինը նաեւ մահվան խորհրդանիշ է)* հրեշտակին, որի ձեռքին մահաբեր ոսկե գավաթն է: Թիկունքին հսկա ժայռաբեկոր է, որից անդին պատկերված է մառախլապատ երկինքը, որի մեջ երեւացող լուսինը *(վերածնության, անմահության խորհրդանիշ)* հավերժական լուսամփոփի տպավորություն է թողնում: Հրեշտակի ոտքերի տակ, ասես քարե օրորոցում, անհոգ քնած են առաքյալները: Նկարի աջ անկյունում պատկերված են զինվորները՝ անկարեւոր ատրիբուտների նման. նկարիչը փորձում է ասել, որ նրանց բերած մահն անզոր է, հաղթված: Եվ Տերը, եւ հրեշտակները, եւ քնած առաքյալները պարուրված են հրեշտակից վեր կուտակված սպիտակ հսկա ամպախրձի վառ լույսով *(լույսը նաեւ հավիտենության խորհրդանիշ է)*: Այնպիսի նկարիչ, ինչպիսին էլ Գրեկոն էր, հազիվ թե չհասկանար, որ ուշ երեկոյան, երբ արդեն երկնակամարի մի կողմում հստակորեն իշխում է լուսնի թագավորությունը, մյուս կողմում իր դիրքերը չի կարող չլքել ցերեկային լույսից առավել լույսը: Սակայն այս լույսը Հոր ուժականությունն է, Նրա ներկայությունը Որդու կողքին: Նկարչի կտավի ողջ ողբերգականությունն ու լույսը խոսում են այն

Կարլ Բլոխ (1834–1890)

մասին, որ երբ բոլորը եւ նույնիսկ ողջ աշխարհը լքում են քեզ, միեւնույն է, դու մենակ չես. Աստված միշտ քեզ հետ է:

Ավետարանական սյուժեի բարդ ու ընդգրկուն պատկեր ստեղծելուն զուգընթաց արեւմտաեվրոպական շատ նկարիչներ (Անջելիկո Բիաթոյից մինչեւ Կարլ Բլոխ) իրենց գործերի կոմպոզիցիան նախընտրել են ստեղծել սոսկ պատումի մեկ՝ աղոթող Տիրոջը եւ Նրան ուժ տվող հրեշտակի դրվագի պատկերումով՝ շեշտը դնելով Հիսուսի ապրումների, հոգեբանական վիճակի վրա՝ իրենց կրոնական ապրումների, պատկերացումների ու մեկնումների առավել կամ պակաս դրսեւորումներից ելնելով:

Ավելի ուշ՝ արդեն 19-րդ դարում, այս թեմային անդրադարձան նաեւ ռուս նկարիչները՝ «Աղոթքը» դարձնելով առավելապես իրենց ժամանակների հասարակական ու քաղաքական, մարդկային ու ընկերային հարաբերությունների բանալի՝ վեր հանելու համար արարող ու մաքառող, ազատամիտ ու ազատատենչ անհատի եւ հասարակության հարաբերությունների՝ հաճախ նաեւ ողբերգական մոտիվը:

Շարունակելի

Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.11.2018 թ.
Տպաքանակը՝ 1175

+++